

ՀՆՁԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ա Ջ Ա Տ Ջ Է Յ Թ Ո Ւ Ն

ՎԵՐՋ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ.

Կատակերգութիւնը գրեթէ վերջացաւ... Եւրօպական վեց մեծ պետութիւնների «գաշինքը» միջամտելու համար հայկական գործում, կամ, աւելի ճիշդ, արեւելեան հարցում, որ բացվել էր հայկական խնդրով, հասաւ իր վերջակէտին: Այսպէս «միութիւնից» — անդր-ռուս-ֆրանսիական — մինչև եւրօպական վեց մեծ պետութիւնների «գաշինքն» անցաւ ամբողջ տարի ու կէս: Ուրախ փոփոխութիւններ կրեց մեր նախ երեք և ապա վեց «գաղութներին» ընթացքն այդ ժամանակամիջոցում: Նրանք սկսեցին մի «pro forma»-ով (ձևի համար) և վերջացան մի «non possumus»-ով (չենք կարող): Այստեղ մենք շտապում ենք, սակայն, մեր խօսքն ուղղել. — մէկը նրանցից մնաց հաւատարիմ իր «pro forma»-ին և այդ մէկն էլ հէնց տարաւ վերջնական յաղթանակը: Վա՛ Ռուսաստանն է:

Այդ փոփոխութիւնները դեռ բոլորը չեն: Նրանք սկսան մի ֆարսով, մի կատակերգութեամբ — Սասունի դէպքերի ժամանակ — և անցնելով մեղօղբամայից դրամայի լըջութեան, դրամայից՝ սարսափելի եղբերգութեան, միևնոյն աստիճաններով կրկին իջան մինչև կատակերգութիւնների, մինչև ֆարսերի ամենածաղրական ու ամենաողորմելի տեսակը: Եւ այդ ամենը կատարվեցաւ — ո՞վ կարող էր այդ կարծել — սուլթանի, այդ անպէտք փալատի, այդ արգահատելի «հիւանդ մարդու», երաժշտութեան տարօրինակ եղանակների տակ, եղանակներ, որոնք սկսվեցան սատուրնեան մոլեկան պարերով Սասունի մերկամարմին կոյսերի, արգանդը պատռված մայրերի ու կոտորած մարդկանց դիակների շուրջը: Ճեղքելով հայութեան երակները, պարերը շարունակվում են մինչև օրս մէկ արեան ծովում, որի մէջ լողացող տասնեակ ու քսանեակ հազարաւոր դիակների շարքի միջից դուրս է ցցվում, իբրև քարացած անխախտ արձան, թիւրքական սուլթանական կուռքն իր արիւնուշտ ու արիւնդայ գազանային, հրէշաւոր կերպարանքով: Նա խմում է մեր արիւնը: Այդ է իր գոյութեան պայմանը...

Գոյութեան պայմանն... Այո, որ այնքան

թանկագին է Եւրօպային: Ի՞նչ հեղնութիւն: Եւրօպական դիպլոմատները, սկսած Սօլդերերից և վերջացած Լօբանով-Ստասովսկիով, բարկանում ու յանդիմանում են մեզ, — մեզ, որ մի փոքրիկ աղբ ենք և որ, վերջին հաշւով, եթէ «կորչենք, անհետ լինենք էլ», Եւրօպային դրանից ոչ յուրտ կը լինի և ոչ տաք, — մեզ, ասում ենք, յանդիմանում են, թէ ի՞նչ իրաւունքով մենք վերջո՞վում ու շփոթում ենք թիւրքիայի ներքին խաղաղութիւնը և վտանգի ենթարկում նրա գոյութիւնը: Տեսնում էք, բանը նրանումն է, որ թիւրքիայի ամբողջական մնալը (intégrité) «պայման» է Եւրօպայի խաղաղութեան և եթէ այդ «խաղաղութիւնը» — որ զինված է — «պահպանելու» համար պէտք լինի մի քանի միլիոն հոգիից բաղկացած մէկ աղբի կորուստը, Եւրօպան այդ «չնչին» զոհողութիւնը «կանի», որովհետև, վերջ է վերջոյ, չէ՞ որ իր «շահն» է այդ պահանջում: Յամենայն դէպս, այդ էլ կատակերգական մի երևոյթ է, եթէ չունենար այնպիսի եղբրական համեմատներ:

Եւ սակայն այդ ճիշդ է. թիւրքիան իր ամբողջութեամբ և իր Ա. Պօլսով այն կենտրոնակէտն է, որի շուրջը, կամայ ախամայ, զըրվում են այսօր եւրօպական տէրութիւնների ամենաէական շահերը. նա մի բեմ է, որի վրայ կատարվում են աշխարհիս ու աղգերի ճակատագիրը ղեկավարող այդ վեց մեծ դերասանների քաղաքական-թատերական ներկայացումները: Մտածեցէք մի բոլոր: Ահա Աւստրիան թիւրքիայի հետ իր ունեցած դրացիական դիրքով, որ Ա. Պօլսի համար կատաղի մրցող է Ռուսաստանի դէմ, և այս վերջինս, իր բազմազան աղգերի պէս-պէս ու խառն կարկատան արած ընդարձակ երկրով, որ ձգտում է դէպի այն չքնաղ Ա. Պօլսը և չէ ուզում իր հակառակորդին թողնել Ռումանիայից, Բօլղարիայից ու Սերբիայից անանցելի պատնէշ կառուցել ռուսական ընթացքի առջև դէպի թիւրքիայի այն սիրտը: Ահա Անգլիան, կանգնած դէմ առ դէմ Ռուսաստանի, որի ընթացքի առջև՝ դէպի Պարսից ծով ու դրա վրայով Հնդկաստան և դէպի Միջերկրական ու դրա վրայով Ա. Պօլս՝ ուզում է ստեղծել, Աւստրիայի պէս, մէկ ուրիշ

ամուր պատնէշ մէկ ինքնավար ու անկախ Հայաստանից, հէնց ճիշդ Կովկասի ռուսական սահմաններից սկսած դէպի ցած՝ Տիգրանակերտ և մինչև Կիլիկիա ու Ելեքսանդրետ: Եհա Ֆրանսիան, որ Ենգլիայի ձեռքով կատարված՝ Լազիպոսի գրաւումից ի վեր սրած է իր ակռաներն իր ալժիրական նոր ու անկոչ դրացիի դէմ և ամեն յարաբերութիւններ լարված են Պարսիկ ու Լճիկոնի պետութիւնների միջև: Վերջապէս, այստեղ չէ՞ արդեօք և գերմանական կայսրը, աղմկայոյզ ու թմրկահար արարածը, որ իր միշտ խրանող ու խրինջող երկվորի պայտերով ծեծում ու զարնում է Լիզաս-Լօտարինդիայի հողը, այդ հողը, որն իր ֆրանսիական մայր երկրի կրծքից կոպիտ ձեռքով պոկված ու տկրված մի ստինքն է: Եւ այդ հարցն այսօր ամբողջ եւրօպական պետութիւններին պահում է՝ մէկ արթուն պահակի պէս՝ զինված մինչև ակռաները և ամեն բոպէ պարաստ ջարթելու խաղաղութեան փշովող ապակին և իրար պատառելու: այդ հարցը, որ Ֆրանսիային զրկել է ամեն ինքնուրոյնութիւնից իր արտաքին քաղաքականութեան մէջ, այդ շրջանում զարձնելով նրան, հանրապետական կոչվածին, ուսական բռնապետութեան մի հաւատարիմ ու խոնարհ շնիկ...

Եհա այն խորին, մշտադոյ ու հիմնական պատճառները, որ այսօր պայման են հանդիսանում թիւրքիայի «անխախտութեան» ու նոյնութեամբ ամբողջական մնալուն, թիւրքական հրքէշի գոյութեան, որ մարդկութեան գլխին մի եղբրական պատիժ է և մի ծաղրական հանելուկ:

Սուլթանն այդ գիտէ, և զրանումն է, իր այդ բացասական դրութեան մէջ, իր գորութիւնը: Եւ նա կարողացաւ հայութեան արեան հեղեղի գրնով օգտվել եւրօպական տէրութիւնների վէճերից՝ մղված Կապուլական համեղ կտորի համար: Եւ եւրօպական վեց պետութիւնների «գաշնքն» իր անդորութեամբ նախ դառնալով ծաղրական, վերջը դարձաւ զգուշիկ ու ատելի: Բայց այդ ցրնորական, խաբէական «գաշնքն» այսօր այլ ևս խախտված է միանգամից ընդ միշտ: Կատակերգութիւնն աւարտեցաւ: Սուլթանը չը գիտէ մի բան. այն, ինչ որ Եւրօպան տեսնում է, այն, ինչ սուլթանական տիրապետութեան օրերը հաշել է: Դա — թիւրքիայի արտաքին ձեական ապահովութեամբ հանդերձ՝ նրա ներքին քայքայումն ու կործանումն է, որ նրան շուտով կը փշէ: Նա այլ ևս ոչ մի միջոց, ոչ մի գործիք, ոչ մի գէնք չունի կառավարելու երկիրը. նա գիտէ միայն խեղդել իր հպատակների ձայներն, արեան տիղմը նրանց գցելով՝ չարաչար խողովողելուց յետ: Հարիւր հազարի կոտորածներից յետոյ անգամ մենք, հայերս, ունենք դեռ շատ ճկունութիւն ու կեանք, որպէս-

զի հնազանդվենք ու հաշտվենք մեր արիւնխախտման թշնամու հետ: Մենք ունենք ոյժ, մենք ունենք գորութիւն, գորութիւն նիւթական իսկ և զրանից աւելի շատ՝ բարոյական: Թիւրքիան կը շարունակէ լինել հայերիս կամքի, ձգտման, դժգոհութեան ու կռիւ թատրը մեր ոխերիմ կառավարութեան դէմ... Եւյդ բոլորի մեծ օգնականը կը լինի թիւրքիայի ներքին կատարեալ խառն ու անիշխանական վիճակը: Եւ այն ժամանակ քնացած եւրօպական տէրութիւնները, դարձած ծաղրական իրանց խաղացած կատակերգութեամբ, որ վարում էր սուլթանն իր հիւսիսային ռուս դրացիի օգնութեամբ ու խորհրդով, եւրօպական տէրութիւնները, ոչ թէ «գաշնք» կապած, այլ զատված այլ ևս իրարից, դէմ առ դէմ կը կանգնեն մերկ իրականութեան՝ շատ աւելի վտանգաւոր իրանց համար, երբ այլ ևս «գաշնքի» կատակերգութիւնների տեղ չի մնալ և մի-մի պահականաւորի աւելացման ծաղրական խնդրով՝ ամեն բան չեն կարող մեռցնել: Եւյդ ժամանակ կը դոյ նրանց համար գործ ելու բոպէն, իւրաքանչիւրն անկախ ու ազատ միւսներից: Նրանք ստիպված կը լինեն այդպէս անել, որպէս ստիպված կը լինի նոյն ինքը հրէշ Համիդը, որ միայն և միմիայն իր անձի ու գահի ապահովութեան մասին է մտածում, կարկատել իր ծակ չարութիւնները և առանց յետ նայելու անհետանալ իր Կ. Պօլսից:

ՆՊԱՍՏ ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ.

ԵՐՐՈՐԴ ՑՈՒՑԱԿ.

ԱՄԵՐԻԿԱ. — ԼՕՎԷԼ քաղաքի հնչական Մամաճիւղից 163 դոյար 10 սէստ հանգանակված հետեւեալներին. Պոնիթ եւ Մուշնի 15-ական դոլ. Մ. Պէկ 10 դոլ. Գ. Ս., Փ. Պ., Մ. Ե., Գ. Ի., Ա. Պ., Ա. Ի., Պ. Գ., Զ. Եղբարք, Գ. Ս., Ե. Ս., Պ. Տէր եւ Վ. Ս. 5-ական դոլ. Ա. Ե. 4 դոլ. 50 սէստ. Ս. Միդ եւ Մ. Գ. Մ., 4-ական դոլ. 2. Ս. 3 դոլ. Ա. Բ., Գ. Մ., Ե. Բ., Գ. Բ., Գ. Բ., Մ. Գ. Սառի., Գ. Մ., Մ. Վ., Ս. Գ. եւ Գ. Մ. 2-ական դոլ. Մ. Է. 1 դոլ. 50 սէստ. Ե. Խ. 1 դոլ. 25 սէստ. Ս. Գ., Ս. Ժ., Գ. Ա., Ա. Ե., Ա. Մ., Գ. Ե., Գ. Խ., Ուն, Ե. Բ., Մ. Մ., Օ. Ե., Մ. Զ., Պ. Ա., Պ. Մ., Օ. Մ., Ե. Ե., Ե. Գ., Պ. Գ. Ի., Ն. Ե. եւ Գ. Մ. Խ. մի-մի դոլ. Մ. 75 սէստ. Գ. Կ., Ս. Գ. եւ Գ. Զ. 50-ական սէստ. Ուն 35 սէստ. Ուն 25 սէստ. ԲՕՍՍՈՒԻ հնչական Մամաճիւղից 40 սնգլիական լիքա: Փիշքուրգի հնչական Մամաճիւղից 104 դոլ. հետեւեալներին. 95 դոլ. Մամաճիւղի 9 սնգլիական եւ 9 դոլ. 5 սնգլիական սնգլիական:

ԹԻՐԻՐՈՒ. — ՕՃ. քաղաքից 330 ֆրանկ հանգանակված հետեւեալներին. Կշիւ Արդարութեան 70 ֆրանկ, Կարծ Երկայնեան 30 ֆր. Արեգակ, Հրատ, Լուսին, Պանդուխտ Պանդուխտեան, Այծեամ, Ներսէճ Կամարական, Հատիկ, Գուրգէն Արծրունի եւ Հրատ Կամարական 20-ական ֆր. Պարգէն Պարգէնեան, Գայլ Արգեղայտ ծովից եւ Ժ. Գ. 10-ական ֆր. Հայկունի Արմենեան եւ Հարմայր Յովսէփեան 5-ական ֆրանկ: — Կ. Պ. քաղաքից հանգանակված Աշոտի միջոցով 10 սնգլ. ոսկի:

ԲՕԼԵՐԳԱՍ քաղաքի հնչական Մամաճիւղից 17 ֆրանկական լիքա: Թ. Ս. Ն. քաղաքից 200 ֆրանկ: ԲՈՒՄԵՆԻԱ. — Զուր ԶՕՎԱ քաղաքից հանգանակված 231 ֆրանկ, Աղասի Նարեկեանի Հայաստանի պանդուխտներից 231 ֆրանկ, հանգանակված հետեւեալներին. Աստուր Յովսէփեան 20 ֆրանկ, Կրակ 15 ֆր. Սենքերիմ, Ե. Մարգարեան, Մ. Յակոբեան, Հրատեան, Թոնսոթ, Մ. Ստեփանեան եւ Կարա իւան 10-ական ֆր. Գնդակ եւ Միքուր 7-ական ֆր. Ժէլատ 6 ֆր. Օճ, Թոյն, Օլիկ, Կարկուտ, Զուր, Կարծ, Սարսուի, Պիճակ, Զիւն, Վատոլ, Էժտիհար, Գետ, Ժով, Մուրատ եւ Նիճէ Յայի 5-ական ֆր. Դեւ, տիհար, եւ Թուրքատեան 4-ական ֆր: Սուր եւ Մարգարեան 3-ական ֆր. Սասունից քաջ Արմէն, Զիւն, Թուր, Իւկա Թոտրով (Պուկար), Պողատ եւ Մարկինի 2-ական ֆր. Արաւելի 1 ֆրանկ:

ՆԱԶԱՐԷԹ ԼՈՒՍԻԿԵԱՆ.

Հնչակեան յայտնի գործիչ, սերաստացի Նա-
զարէթ Լուսիկեան, որ մեծ դեր էր ունե-
ցել Վ. Պօլսի 1890-ի յուլիս 15-ի Յոյցում և
վերջերս մի կերպ աջողել էր փախչել իր արտա-
վայրից, Միգիլը կղզիից, ուր մնացել էր մօտ
չորս տարի, 1895 հոկտեմբեր 16-ին Վանի
մօտ, Բօղազ-Բէսէն գիւղում թիւրք կառավա-
րութեան ոստիկանների և Հնչակեան ասպատա-
կային մի խմբի մէջ տեղի ունեցած մի կռուում ըս-
պանված է: Վէպքի մանրամասնութիւնը և
այդ անձնուէր գործիչի ու քաջ նահատակի կեն-
սագրութիւնը կը հրատարակենք «Հնչակի» առա-
ջիկայ համարում: «Նազարէթն այն ժողովուրդային
հերոսների տեսակից էր, որոնք այսօր յաղթանակ-
ներ են տանում օգէթում: Նրա անվահերու-
թիւնը, անկեղծութիւնն ու անձնութեան օ-
րինակելի են: Իր ընկերները միշտ վառ կը պահեն
նրա քաղցր յիշատակը, որ կը մնայ ընդ միշտ ջերմ
ողևորութեան մէկ աղբիւր:

Ա.

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԵՐ.

ՆՈՐԱՆՈՐ ՅԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԵՌԱԳԻՐ.

(ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՅԻՑ)

10 յունվար 96.

Օգէթումը կը շարունակի քաջաբար կռուել:
Թիւրք զօրքերու կողմէ անոր զրաւման տարածա-
նութիւնը բոլորովին սխալ են:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ.

** 27 դեկ. 1895.

Օգէթումըները տիրեցին Նարբուզի և Մն-
տերունի. *) վերջնայ մէջ հաստատած են կառավա-
րութիւն: Արդէն Ատանայէն եկող վաշտ մը ամ-
բողջ փնտցուցած են: Ծաղտուած իբր զինուորներ
փողերով ողջունելու ելած են և բաւականին մօ-
տենալէ վերջ՝ անմիջապէս, անհաւատալի արա-
գութեամբ պաշարած են թիւրք վաշտը և բոլո-
րովին կոտորած: Թիւրքերը սաստիկ սարսափի մէջ
են: Բանակը գտնուող զօրքերէն այստեղ իրենց
ծնողներու հասած նամակները ցոյց կուտան թէ
շատ խեղճ և յուսահատ վիճակի մէջ է թիւրք
բանակը. անօթի և մերկ, գտնուած տեղերնին ճախ-
ճախուտ տեղ մ'է եղեր: Թիւրք կառավարութիւնը

*) Անտերուն մի գայմազամէթիւն է, որ գտնվում է Զէյ-
թունի հարաւ-արեւմտեան իողմը և բաղնիսցած բազմաթիւ մն-
նքը զինուորից:

Ծ. Խմբ.

անկասկած հաւատացած է թէ անգլիացի ռազմա-
գետեր կան անոնց մէջ. հեռադիտակով քննել և
այդպէս է ըսել Պօլսէն եկող զինուորական հրա-
մանատարը:

28 ՀՈԿՏ. 1896. ԶԷՅԹՈՒՆԻ-ԶՕՐԱՆՈՑԸՆ.

Երէկ Ալապաշ մեկնող հայկական 400 հոգւոյ
բանակը բաւական յաջողեցաւ և յաղթանակեց: Զա-
հանի արեւելեան եղբրքի վրայ բնակող Պէշէնցի և
Քէրթմէնցի թուրքերը, որոնք օսմանեան բանակի
լրտեսներն էին և կը վառէին Ալապաշի հայերի տու-
ները, յաղթուելով փախան Զահանի արեւմտեան եղբրքը
օսմ. բանակի մօտ, ամենքը 100 տուն, իրենց ձեռքե-
րով վառելով իրենց տներն ու գոյքերը. բանակն ալ
առանց դիմադրելու 2 ժամուան տեղ ետ նահանջեց:
Հայկական բանակը նստած է անոնց դիմացը: Օսմ. բա-
նակը օր օրի կաւելնայ...

Երէկ իրեկուն, հոկտեմբերի 27-ին, Նատիւրցինե-
րը 500 հոգւոյ ստուար մի սէյմէնով յարձակեցան
Թէշէմէլիքի հայերի վրայ, որոնք ընդամենը 80 հո-
գի էին. կռիւը տեւեց ամբողջ 5 ժամ: Վերջապէս տա-
ճիկները բաւական ջարդ ուտելով յաղթուեցան և փա-
խան: Յայտնի չէ տակաւին թէ թուրքերէն քանի մարդ
սպանուած է, սակայն հայերէն վնասուող չը կայ: Նա-
տիւրցի գիւղապետները կռուէն յետոյ դիմեցին և
յայտնեցին որ՝ ՆԱՄ գործը Աստուծմէ է, որ այդքան
քիչ բազմութեամբ 20 օր մեզ դիմադրեցիք և վեր-
ջապէս յաղթեցիք: Այժմ կը խոստանամք այլ ևս եր-
բէք ձեր վրայ չը քաշելու, միայն թէ վաղը Զօրանոց
կերթանք անձնատուր լինելու, դուք ալ խոստացէք, որ
օգէթումները չը գան մեզ կոտորելու: Թուրքերու
այդ պայմանն ընդունուեցաւ, բայց դեռ Զօրանոցը չը
հասան:

Շէվիկիի հայերը միացած ֆունուզի և Կապանի հա-
յերուն հետ մեծ կոտորած տուին Նայիճ Օղլիի սէյ-
մէին: Նայիճ Օղլին սպանուելով քաշկատուեցաւ ձո-
րի մը մէջ. թուրքերը փախան: Կապանը պաշարուած է
600 սէյմէնով. իրենց առաջնորդն է Ղարա - Միւլի
թի օղլի Մէմէտ էֆէնտի: Յուսալից ենք թէ Նայիճ
Օղլիի բազմին պիտի արժանանայ: Փախած են Հաճի
էֆ. Տուրտու բէկը, Մուրթազա աղան, Սիւլլիւ
աղան, Տուրտու չաուշը և հասած են Թօխաթի թուր-
քերի մօտ նոր ոյժ բերելու Կապանի հայերուն վրայ:
Նայիճ օղլին զարնուած է կրծքէն և զարնողն ե-
ղած է «Աւօ» զօրագնդի տասնապետներէն Շէվիկիցի
Կարապետը:

ՏՕՐԱՆՈՑԸ.

204-ՄԱՐԶՈՒԱՆԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿՌԻՒՆԵՐԸ.

Նախորդ նամակաւ գրուեցաւ ձեզ փայտի երեք
հայ գիւղերու՝ վիճակը, անոնց ագարակներու կրակուի-
լը, ապրանքներու թալնուիլը թիւրք զօրքերէն և պա-
շտօնող չէրքէզ, քիւրտ և թիւրքմէն ժողովուրդէն,
երկրագործներուն անխնայ կերպիւ անտանելի տան-
ջանքներու տակ մեռնիլը և ոմանց ալ լեռներէն ու ծեր-
պերէն փախչելով հազիւ իրենց տունը կամ Զոք-
Մարգուան հասնիլը. վերջապէս այդ բարբարոս ժողո-
վուրդին մինչև Օճագլի և Էօղլըլի գիւղերն հասնիլն ու

այնտեղ ևս ի գործ դրած հարստահարութիւնները, թալան և կողոպուտը և մինչև իսկ այդ երկու գիւղերու հայոց ամայի տանց ծովերուն մինչև երկինք բարձրանալը, ևն.:

Այժմ կուգամ գրել թիւրք ժողովրդի, ոստիկան Բէճէպի և անոր արբանեկաց առաջնորդութեամբ՝ Չոք-Մարզուանի վրայ յարձակիլն ու տեղի ունեցած կռիւը:

Կռիւն սկիզբը կը ստանայ հոկտեմբեր 31-ի երեքշաբթի օրը ժամը ութին միջոցները, այն օրը, երբ գեռ Էօզէրլիի հայուկները վերջնական որոշմամբ ի ստիպել հարկին, շուարած թիւրք խուժանի պաշարումէն, և անոնց կատաղութենէն, կը փափագէր մէկ անգամէն փոխադրուիլ Չոք-Մարզուան. բայց այդ ալ գրեթէ խիստ դժուար և անկարելի էր դարձած, եթէ չի հասնէր Հնչակեան քաջն Շահինը իր հետ առնելով ուրիշ ընկերներ ևս օգնութեան:

Հերոս Շահինը հազիւ կը հասնի հոն, կաճապարէ հայոց իրենց ընտանիքներն ու մի-մի ձեռք ալ անկողին և կարելի եղածին չափ ալ կարասիք բեռնուել գրաստներուն և ուղարկել Չոք-Մարզուան ապաստանելու, իսկ ինքը կերթայ Էօզէրլի վերի կողմի ներս մասնելու անցքի բերանը կը կեռայ, ուր արդէն 50-60 հատ զինեալ թիւրք ձիաւորներ եկած էին և ներս մտնելու վրայ էին: Սակայն քաջ Շահինը հոն ամենայն վեհանախութեամբ կարգիլէ զանոնք, որոնք քիչ մը հակառակէն յետոյ ամօթահար ետ կը գնան երկու խմբի բաժնուելով: Շահինն այդտեղ մի քանի պահապաններ թողնելով, կերթայ մէկ ուրիշ անցքի քով և հոն ալ զինքը ցոյց կուտայ թշնամեաց. թշնամիք կը կարծեն թէ Շահինի նմաններ կը գտնուին գիւղի մէջ, որին մէջքը և կուրծքը բոլորովին փամփուշտ կը զարդարէր և ինքն ալ իր տեսքով մի խրոխտ հակա է արդէն:

Շահինը մէկ կողմէն թշնամուոյն կը դիմադրէ և անոր ներս անցնելը կարգիլէ, միւս կողմէն ալ հայերուն բեռնցնել տալով կը փոխադրէ Չոք-Մարզուան: Վերջապէս թշնամիք կը հեռանան նոյն գիւղի մօտէն, ուր հայք արիւն քրտինքի մէջ միշտ կը կրուին, բայց ոչ ամենը. Շահինն ալ կուգայ Չոք-Մարզուան: Էօզէրլի գիւղի այդ մեծ օգնութիւններ տալէն վերջ, իր հետ բերած ընկերներն արդէն զանազան գործերով մեկնել էին իր քովէն:

Հազիւ կը հասնի Չոք-Մարզուանի մէջ, ահա նորէն լուր կը հասնի իրեն թէ թիւրք ձիաւորներ մուտան գիւղը: Շահինն առանց դադար առնելու, կրկին ետ կը գտնայ իր հետ առնելով նաեւ պ. Վարդանը և ուրիշ Հնչակեան ընկերք. և ահա այդ երկու գիւղերու մէջտեղ գտնուող գետին եզերքը հազիւ հասած՝ դիմացէն կեղծ յիշեալ ոստիկանապետ Բէճէպը ձիաւոր ոստիկաններով և շատ մը ալ պաշտպանութեան հետ ևս հետեւեալ ժողովրդով, մօտ 200-ի. մերինները թուով քիչուր էին: Թշնամիք կսկսին գնդակահարել մերինները, իսկ մերիններն ալ չի նայելով թշնամեաց շատութեանը, անոնց գնդակի փոխարէն կսկսին գնդակով պատասխանել: Ամբողջ մէկ ժամ երկու կողմէն ալ անընդհատ զինաձգութիւն տեղի կունենայ, բայց Շահինի մարթնիկի սքանչելի գնդակներէն մին կը ձգէ թշնամեաց միոյն և մի գնդակն ալ Բէճէպի սկանչի քովէն կանցնի, որ այդ բանէն խիստ վախճալով, անմիջապէս ձիէն կիջնէ և ընկերներուն ալ կը հրամայէ ձիերէն իջնել և պահուիլ. և այդպիսով կամաց կամաց

կը փախան թշնամիք, յաղթուած և իրենց մի զոհը տուած: Երբիններն ալ յաղթութիւնը ստացած, ուրախ զուարթ կը դառնան Չոք-Մարզուան, ժամը 12-ի տեսները:

Հետեւեալ առաւօտուն, Նոյեմբերի 1-ին, այդ օրը, որ նշանաւոր հանդիսացաւ Չոք-Մարզուանի համար, քաջարի Շահինը կրկին կը գնայ Էօզէրլի և հոն մնացած մի քանի տուն հայերն ալ ապահով կը բերէր, երբ վերադարձին գիւղէն դուրս ելած տեղերնին վեց թիւրք ձիաւոր կը պատահին և հայոց բեռները կուլեն յափշտակել՝ հայք կը մերժեն. թշնամիք զենքի կը դիմեն, որին փոխադարձաբար կը պատասխանեն Շահինն ու ընկերքը. հրացանաձգութեան ձայնին՝ օգնութեան կը հասնի Զաքարիա Պալեան քաջ Հնչակեան երիտասարդը իր ընկերներով. այդտեղ թիւրք ձիաւորներէն մին կը սպանուի, իսկ մնացած հինգը կը փախան:

Շահինն իր ընկերներով հազիւ հասած չը հասած Չոք-Մարզուան, ահա անդին թշնամին խուռն բազմութեամբ, երկու հազարի մօտ, հեծեալ ու հետեւեալ, թիւրք, չէրքէղ, քիւրդ և թիւրքմէն աշխրանքներ, իրենց առջեւէն բռնած մի ժողովրդային զրօշակ, «փէյշապարէ սէլավաթ» պոռալով՝ երևան կուգան, իրենց առաջնորդ ունենալով ոստիկանապետ Բէճէպը և անոր տասնեակ ոստիկանները:

Չոք-Մարզուանի հիւսիսային կողմէն եղաւ առաջին յարձակումը. սաստիկ կատաղած ամբոխը նախ սկսաւ հրացաններ պայթեցնելով գնդակ տեղացնել այդ նախաձեռնի հայաբնակ գիւղի վրայ, սակայն բարեբաղդաբար թշնամեաց գնդակներն անպատասխանի չի մնացին. երկու կողմէն ալ սարսափելի որոտմամբ պատերազմը սկսաւ: Թշնամուոյն գնդակներն ի զուր կը թափին և չեն կարողանար աղդել պատնէշի ետեւ կեցող հայերուս, բայց հային գնդակը մեծ կոտորած կուտայ թշնամուոյն, որ իր զոհերը տեսնելով գետին փռուած ամօթահար ետ կը փախան: Ամբողջ երկու ժամ անընդհատ հազարաւոր գնդակահոծութիւն տեղի ունենալէն վերջ, յուսահատելով և միանգամայն յոյժ կատաղած մեկնեցաւ յաղթուած գազաններու վայրենի ամբոխը:

Ընշուշտ խիստ ամօթ կը սեպէր թիւրքը իր յաղթութիւնը, ուստի աւելի վրէժխնդիր եղած, աւելի կատաղած և վերոյիշեալ բառը խիստ աւելի պինդ և բարձր պոռալով յարձակեցաւ մի քիչ վարը արեւմտեան կողմէն Չոքու ճամբայի (շուկայի) վրայ: Վերստին սկսաւ հազարաւոր զենքերի ձայնը, որ կը խլացնէր բոլոր բնակիչները և օդը կը թնդացնէր. և այդ սոսկալի պատերազմի արձագանգը կը տային դիմացի լեռները: Ամեն մէկ գնդակէն, երբ թշնամին կը գլորուէր, հայ ժողովուրդը կեցցէներով կը թնդացնէր օդը: Վերջապէս թշնամին բազմաթիւ զոհ և վիրաւորներ ալ հոտ տուաւ, սովորական փախստեանը դիմեց: Թիւրք ժողովուրդը աւելցաւ, բայց յուսահատութիւնն ալ վրէժխնդութեան հետ միասին կը տիրէ իր սրտին և շուարած չի գիտեր ինչ միջոցներու դիմելը:

Քանի մը կողմերէն փորձ ըրաւ թիւրք խուժանը յարձակումներ անելով, սակայն և ոչ մի դուռ չի կարողացաւ գտնել նեղ մասնելու. ամեն տեղ իր առջև պահապաններ և իր գնդակաց պատասխանատուներ էլան:

Պարահատեալ կը դիմեն գէպի զօրատեղին և զօրապետէն կը խնդրեն օգնութիւն, ասելով թէ «մենք

կը կոտորուինք և կը յաղթուինք կեամբուներէն. ձեր զօրաց մեզ հետ միանալը անհրաժեշտ հարկ է: Բայց զօրապետը հակառակ անոնց խնդրանաց կը մերժէ այդ առաջարկութիւնը և խայտառակելով կը վռնտէ խուժանը, թէ «դուք և թէ զօրքն ալ յարձակելու լինիք դարձեալ կը յաղթեն մեզ» կը պատասխանէ զօրապետը, սակայն յետոյ կստիպուի հեռագրել Ատանա, թէ իրեն 200 զօրքը չը բաւեր. ատոր վրայ 600 ևս հասաւ:

Վերջին կատաղի բարկութեամբ այդ թուրքաց խառնիճաղանձ ամբողջ յարձակեցաւ կրկին արեւմտեան կողմէն, իրենց Գապիւլլըքի քովէն Մարգարէին կանչելով, առաջացան 2 դը-Մարգուլանի վրան վրէժ լուծելու համար: Սարսափելի կերպիւ կորոտայ այս անգամ զէնքերի ձայնը երկու կողմէն ալ. այդտեղ մերինները քիչ կը նահանջեն և թշնամին մի քիչ կը յառաջանայ, մերինները երկու մեռեալ կունենան. սակայն քաջ ընկերաց ջանքերով կրկին ետ մղուեցան թշնամիք և բաւականին զոհեր ևս տալով դարձեալ ամօթահար ետ դիմեցին:

Թիւրքը վերջին փորձ մը ևս անելու համար կրկին գիմեց վարը շուկայի կողմը, նորէն ժամը 10 եղած էր, և այն տեղէն ալ մեծ կորուստ կրելով ու բոլորովին յաղթուած ու յուսահատ քաշուեցաւ ետ և այդտեղ պատնէշներէն դուրս գտնուած հայոց տուները, որ ամայի, անմարդաբնակ կը գտնուէին բայց ապրանք և ուտեստ բոլորն ալ մէջն էին. նախ միջինները կը յափշտակեն և ապա կրակ կը տան տուններուն ու կերթան. այդ ատեն ժամը 12-ը անցեր էր:

Այսպէս 2 դը-Մարգուլանն ամբողջ տասը ժամ թշնամեաց յարձակմանցը դէմ գնելէն և շարունակ պատերազմելէն վերջ մի մեծ յաղթութիւն ստացաւ, իր ձախտին վրայ մի պարծանաց փայլ ունենալով: Արդէն համբաւն ու հուշակը խիստ մեծ եղաւ. տարածայնութիւնը խիստ մեծ էր անոնց քաջութեան մասին:

Պատերազմի մէջ քաջամարտիկ և լաւ դեր խաղացողներն հետեւեալներն են. նախ՝ դիւցաղն և արիւստիտ Շահինը, անոր համար աւելորդ է ասել թէ 2 դը-Մարգուլանի և Էօղլըլիի հայոց փրկիչն էր. ամեն պարագայի մէջ, ամեն մէկ անկիւնի մէջ, կայծակի նման պատրաստ և նախաձեռն կը գտնուէր նա: Ծեր, երիտասարդ, կին և օրիորդ ու մանր երեխայք կը պաշտէին իբր Աստուած Շահինը, տանեակ հաղարաւոր թշնամեաց դէմ միակ պաշտպան զինքը ձանաչելով: Ապա Հնչակեան Վահան չօճուգ. դա արդէն նշանաւոր իր խոզորսորդութեամբ և լաւ նշանաւորութեամբը և միանգամայն իր ազգասիրական սքանչելի ոգւով թշնամեաց սրտին ահ ու սարսափ ձգած էր, որ պատերազմին մէջ իր վաղուցուն ունեցած փափագները լեցուց:

Յետոյ են՝ Մկրտիչ Պալեան, նորա որդին Զաքարեան (Գարանլըգ Գափուի դէպքին գործակատարներէն մին և 16 ամիս բանտը մնացող), Արիստակէս Պալեանց, Համբարձում Ռուբէնեանց, Խաչատուր Գոյոլումճեանց. սոքա ամենքն ալ Հնչակեան են:

Հնչակեան պ. Վարդանին համար ալ աւելորդ է ըսել թէ որքան աշխատած, որքան հրահանգած և որքան աստ անդ վաղելով քաջալերութիւն տուած է պատերազմողներին. և ինքն ևս միշտ պատերազմի մէջ կը գտնուէր:

Բաւձ որ այդ յաղթութեան հետ միասին գիւ-

ղացւոյն մեծամասնութեան վրայ յուսահատութիւնն ալ տիրեց այդ երեկոյին, թէ վերջը ինչ պիտ ըլլայ. սկսան ատնը խօսիլ, թէ պէտք է կառավարութեան դիմենք և անձնատուր ըլլանք, ևն.: Բայց երիտասարդութիւնն ալ միշտ կը սպասէ նորանոր յարձակմանց և փափագ ունի դեռ ևս կռուիլ: Գիւղի աղայք այդ երեկոյին մի տոմսակ պատրաստելով կռուարկեն զօրապետին, ինքզինքնին արդար ձեռքներու համար (առ ի սահ). նա ալ ի հարկէ յանցանքը հայոց կը գտնէ: Ինչ և իցէ աղայք միշտ խորհուրդ կանեն այդ վիճակէն ելնելու միջոց գտնել և կռուի տեղի չը տալ, շարունակ կերթան կառավարական պաշտօնէից քով և գթութիւն կը հայցեն ու իրենք ալ միշտ ժողով կընեն ու կը խորհրդակցին:

Թշնամիք ալ ուրիշ օր կանոնաւոր յարձակում չարին, բայց աւազակի նման գիւղի բոլորտիքէն կուգային. թշնամիները երբեք պակաս չէին, կը թնդային գիշեր ցորեկ հրացանի ձայները 8 օր և թշնամին ամէն օր զոհ տալով, փախուստ կուտար: Այդպէս տուեցին շարունակ կռիւները, մինչև ութ օրէն վերջ 2 դը-Մարգուլանցին ալ յանձնուեցաւ, շրջապատուած թշնամիներէ թէ ներսը հայերէն և թէ դուրսը թիւրքերէն: Այդ ութ աւուր միջոցին եկան պաշտօնեայնէր, Ալայ պէի գօմանդատ Ֆէրիք փաշա և ճէպէլի միւթէսարը Փը. սոքա քանիցս նամակներ զրկեցին և առաջարկութիւններ արին, բայց լսելի չեղաւ հայ երիտասարդութեան կողմէն: Նոյեմբերի վեցերորդ օրը վերջնական կերպով մի յայտարարութիւն կռուարկէ հրամանատար փաշան թէ «վաղը ժամը երեքին ձեր բոլոր զէնքերը և 400 քաշ հրանիւթ, այս ինչ անձերը ևն. եթէ մեզ չի յանձնեցիք, թնդանթները լարած և պատրաստ պիտի բոլորովին ոչնչացնեմ ձեզ և ձեր բնակավայրը»: Այս յայտարարութիւնը իրիկուան եկեղեցին ընդհանուր ժողովով շերտալուծեանը կարգացուեցաւ, և գիւղացոց մեծամասնութիւնը խիստ վախնալով, հաճութիւն ցոյց տուաւ: 2 դը-Մարգուլանի աստղն ալ մարած էր: Այդ օրը մէկ ամերիկեան մարտանաւ գալով Փայասի մօտ, 2 դը-Մարգուլան գտնուող Տօթթօր Օհանէս Բէլթէկեանը որ Ամերիկեան հպատակ է և ամերիկայէն ամուսնացած, պահանջեց և կառավարութիւնը խնդրը յայանց տօթթօրին, որ ելաւ ոստիկան անունով Ալէքսանդրէտ գնաց: Հետեւեալ առաւօտուն աղայք խեղճ ժողովով մի մասի զէնքը հաւաքելով կը զրկեն Միւթէսարը Փը. Միւթէսարը Փըն ալ կրտէ թէ, ով որ հնազանդ է տէրութեան, թող լեռը մեր քով գայ: Եւ ահա այս խօսքին վրայ գիւղէն ընտանեօք ու զաւակօք ցուրտերի մէջ, աղիոցով կերպիւ լալով հաղարաւոր այր և կին ելան լեռը զօրաց քով, ուր 800 զօրք և տասը հազար ալ պաշտպանուգ լեցուած էին: Մեր անձնատուր չեղող պ. Վարդանն ու պ. Շահինը իրենց հետեւորդ ունենալով 100-ի մօտ զինեալ կըտրիճ Հնչակեաններ՝ քաշուեցան գիւղէն դուրս մի ուրիշ լեռ: Միայն Բէրովըքէ Բէշիշեանը, որ կառավարութիւնը կը պահանջէր, այդ դանդաղ արարածը շուարած այդ միջոցին, ինքն ալ իր հօր և աղայից խօսքովը կերթայ ու անամօթաբար այն քսան հազար ժողովրդի մէջ, Միւթէսարը Փըի ու միւս պաշտօնէից ձեռքերն ու ոտքերը կը համբուրէ, յետոյ ալ կը հրամայուի որ հարկ չէ իրենց ձեռքն ու ոտքը համբուրել, այլ ամենայնպէս, մի նէ ֆէրի արեւները

Թող համբուրէ, և ցոյց տրուելով մի հոտած և բըն-
թի զօրքի ծակոտած և կեղտոտ տրեխը, կը համբուրէ
անոր ոտքի տակը. և Միւթէսարը Գլին մէկ աղօթք
ընելով Թագաւորի կենացը համար, բոլոր հայ և Թիւրք
ժողովուրդը ամեն կը պոռայ և կը դառնան իրենց տեղը.
և ապա 200-ի չափ զօրք կը գայ կը մտնէ գիւղի
վերի կողմէն և մինչև վար կիջնէ: Ահա այսպիսով կը
յանձնուի 2օք. Մարզուանցին՝ իր գիւղի ապհովութեամբ
բը միասին: Շատ մը երիտասարդներ լացին ուսմացան
այդպիսի մի անարգութեան համար. բայց ինչ օգուտ
աղաներն ըրին այդպէս: Այժմ 2օք-Մարզուանի վի-
ճակն աւելի շատ վտանգաւոր պէտք է նկատել...

Ահա ճիշտ այս վերջին վայրկենիս 2օք-Մարզու-
անէն երկու թղթատար անմիջապէս հասան հոս լեռը և
աղաների կողմէն նամակ են բերեր մեզ թէ Միւթէսարը Գլին
գնաց 2օք-Մարզուանէն և ահա զօրքն և Թիւրք խու-
ժանը կրկին ոտքի ու իրարանցման մէջ են և թէ ծանր
դէպքերու պատահմունքն ակներեւ է: Այս անգամ ա-
ղետալի պիտի լինի և կը վախնանք, որ աղայներու խել-
քով ու վատութեամբ 2օք-Մարզուանի ժողովուրդն
այսօր բոլորովին զոհ պիտի երթայ:

ԱՆԱՀ.

ԳՈՒՐԾՈՒՆԼՈՒ.

ՀՆՁԱԿԵԱՆ ԱՍԳԱՏԱԿԱՅԻՆ ՀՐՈՍԱԿԱՆՄԻ
ՅԱՂԹԱԿԱՆ ԿՈՒԻԸ ԹԻՒՐԲ ԶՕՐԷՆԻ ՀԵՏ.

12 դեկտ. 1895 ***

Այս փութանք հաղորդել ձեզ նշանաւոր դէպք մը,
որ այս օրերս տեղի ունեցաւ Գուրջուանի Հնչակեան
հրոսակախումբի և Թիւրք կառավարութեան միջև:

Միւստեան խումբը, որ կուսակցութեան այս կողմի
անգրանիկ խումբն է և ամբողջ 5 տարիէն աւելի քա-
ջաբար պահպանած է իր գոյութիւնը և հաստատ կե-
ցած իր սկզբունքներու վրայ, փառաւոր յաղթանակ մը
ևս յաւելցուց իր նախորդներուն վրայ, որ ինչպէս գի-
տեն ընթերցողներ տարած էին ապանելով Լօղման և
իր ընկեր Նիւչիւք Հասանը և Մարզուանի՝ Տէյիւրմէն
Տէրէսի մէջ ևս Մէվուտ չաւուշը և ուրիշ շարք մը
քաջագործութիւններ, որոնք իրենց ժամանակին գրուած
են „Հնչակի“ մէջ:

Կառավարութիւնն այս անգամ ալ դիմած էր ամ-
բողջ երեք տարի Գուրջուանի լեռներու մէջ իր շա-
հատակութիւններով և աւազարութիւններով նշանաւոր
Գայրգճի-Օղլու աւազակապետին, խոստանալով իրեն
ներել, եթէ կարողանայ Միւսաս-Օղլու Յովհան-
նէսը կամ ողջ բռնել և կամ սպաննել: Գայրգճի-Օղ-
լուն այդ յոյսով կը հետեւէր Միւսաս-Օղլուն, բայց իր
այդ նպատակին չի հասաւ և կեանքն ալ վրայ տուաւ:

Այրք Միւստեանն իր հետ ուրիշ երկու ընկերներով
տան մը մէջ փակուած էր և միւս բոլոր ընկերները
նոյն գիւղին մէջ մաս-մաս տները բաժնուած էին,
Գապա-ճէվի զանուն հայ գիւղին մէջ, գիւղացի
մը կերթայ և Գայրգճի-Օղլուն լուր կուտայ թէ Մի-
ստեանը երեք ընկերով այս ինչ տան մէջ պահուած
է: Գայրգճի-Օղլուն անմիջապէս իր աւազակախումբէն
զատ իր հետ առնելով նաև կառավարութեան կողմէ
իրեն օգնական տրուած 50-60 զինուորներ, կերթայ
Միւստեանի գտնուած տան մօտ արտի մը մէջ կը տես-
նէ Գապա-ճէվիցի Տէր Զակար Տէր Զակարեանի եղ-

բայրը, մատնիչ գիւղացին, կը բռնէ զայն և թևերը
ետև կապած խուլմին առջև կը ձգէ, որ լուր տայ թէ
Միւստեանը ո՞ր տան մէջ կը գտնուի: Մատնիչը ցոյց
կուտայ, բայց միայնակ իրենք առաջ խաղալու կամ
յարձակելու չը համարձակելով՝ Գայրգճի-Օղլուն խո-
րամանկութեամբ Տէր Զակարի եղբորը թևը կը մտնէ
և այնպէս առաջ կը քալեն, որպէսզի եթէ ինք զարնուի
հայն ալ անպատճառ իր հետ զարնուի: Երբ տանը կը
մօտենան՝ ներսիները կիսանան ելելու թիւնը և անմի-
ջապէս ինքզինքնին պաշտպանողական դիմելու մէջ կը
դնեն ու կըսկսին կռուիլ: Առանց իրենց փնտ մը գա-
լու կը սպաննեն Գայրգճի-Օղլուն աւազակապետ Արի-
ֆը: Երբ սա կը տեսնէ թէ ինք մահացու կերպով
վերաւորուեցաւ շուտով ինքզինք տէր Զակարի եղբոր թե-
ւէն կազատէ և իր մէջքը ունեցած ընկուկներով կսպան-
նէ մատնիչը, կը սպանուին ուրիշ երկու զինուորներ և
հանրածանօթ չէրքէզ աւազակ Սահաթէրին, մնացած-
ները սարսափած փախուտ կուտան: Սպանուածներու
հրացանները և ուրիշ ռազմավթերն ու զէնքերը կը
գրաւուին Միւստեաններու կողմէ որոնք իրենց այդ ա-
ւարով կը հեռանան և կը բարձրանան լեռներու ա-
մուր տեղերը, պատուիրելով գիւղացիներուն, որ եթէ
գիւղի վրայ յարձակում գործուի և որ և է ներդրութիւն
գայ շուտով իրենց իմաց տան, որ անմիջապէս գիւղը
պաշտպանելու հասնին: Մանրամասնութիւնը և այդ դէպ-
քի հետեանքները կը գրեմ մանրամասն կերպով ա-
ռաջիկային:

ԵԼԱԿ.

*** 28 դեկ. 1895.

Նախորդ թղթակցութեամբ գրած էի Միւստեան
Հնչակեան խումբի ընդհարումը Գայրգճի-Օղլուն աւազա-
կախումբի և կառավարութեան զինուորներու հետ, մերայնոց
փառաւոր յաղթանակը, աւազակախումբի պետի Արիֆի ըս-
պանումը. իրաւի հնչակաւոր աւազակապետ մը, որ
վաղուց ի վեր կը սարսափեցնէր Սև Ծովու եղբրքէն
սկսած մինչև Սեբաստիոյ և Եօզկատի շրջականները: Սա
խաբուած կառավարութեան կեղծաւորութիւնն է շա-
ցած անոր փայլուն խոստումներէն յանդգնեցաւ Միւսա-
եանը ողջ բռնել կամ գլուխը տանիլ կառավարութեան:
Բայց հաշիւը միեւնոյն եղաւ. փոխանակ Միւստեանի գը-
լուխը գերի իյնալու՝ իրենին հետ իր սիրելի ընկեր չէր-
քէզ աւազակ Սահաթէրի և երկու զինուորներու գլու-
խը գերի ընկաւ իրենց բոլոր զէնքերովը:

Այժմ Միւստեանները բոլորովին ապահով դիմել
մէջ են: Այն կռիւն որ 3 ժամէն աւելի տևեց մերա-
յիններուն մէկին մազին անգամ փոքր փնտ չի պատճա-
ռեց: Թշնամիներու համար բարեբաղդութիւնն այն էր,
որ մութը կոխեր էր, որուն շնորհիւ կարողացան իրենց
փախուստն ապահովել: Կառավարութեան խիստ ծանր
եկաւ այդ յանգուզն բռն մը քաջերու ապտակը և
մտադիր էր ծայրայեղ միջոցներու դիմել, սակայն, ինչ-
պէս կը լսէիք, օտարներու ճնշումին տակ չը կարողացաւ
իր գիտաւորութիւնը ի գլուխ հանել, թէ և եթէ փոր-
ձէր ալ նա մերայիններու կողմէ պիտի հանդիպէր բու-
ռն ընդդիմութեան և այդ ամուր լեռներու վարժ հե-
րոսներու առջևէն պիտի ստիպուէր փախուստ տալ: Ներ-
կայիս լեռները բարձրացած զինուոր սիւարմներն ալ կա-
մաց-կամաց քաղաք կիջնեն: Սամսոնի միւթատարը Գլին
քանի մը հայ երեւելիներու պատուիրել է, որ Միւսա-
եաններու լուր տան թէ իրենց յաղթութիւններէն շը-
փացած չըլլայ որ գիւղացի թիւրք ժողովուրդին փնտ

մը հասցնեն (°°) և ինքը պատուոյն վրայ երդուեց-
ցած է, որ լեռը եղած զինւորներն ալ վար պիտ
կանչէ և թէ հերոսախումբը կարող է իր տեղ հան-
գիստ մնալ և այդ պարագային երբէք չը պիտի հե-
տեւի անոնց: Եթէ ընդհակառակը փնաս մը հասցը-
նեն, ըսած է, ես ալ պիտի կոտորեմ ամբողջ գիւղա-
բնակ հայ ժողովուրդը:

ԵԼԱԿ,

Բալու սեպ. 4 1895

«Օգոստոսի մէջ իմացուելով որ Կարինէն քննիչ մը
ղրկուած է քղի, ուր տեղի ունեցած խռովութիւնները
տեղեկանալու, հարստահարեալ Բալուցին ալ 800 ըս-
տորագրութեամբ հանրագիր կամ բողոքագիր մը ստա-
րագրելով՝ Հաւաքի Պաղտասար Խըրջեանի ձեռամբ
ղրկեցին քղի, եւ ձերբակալուելով հոնտեղի կառավա-
րութեան կողմէ, իբր մահացու մեղք բանտարկել տը-
ռաւ: Երբ քանի մը օր ետքը Բալուի քաղաքէն ոստի-
կաններ լեցուեցան Հաւաք գիւղը, խուզարկեցին տ.
Յակոբ Լէյլէկեանի, Վարդան Փաշալեանի, Հայրապետ
Կատարիկեանի և Նշան Քէօսէկեանի տունները, ուրկէ
ոչինչ չը գտնուեցաւ և առանց պատճառի ձերբակալ-
ուելով՝ բանտ տարուեցան, մէկ շաբաթ բանտի մէջ
առանց հարցաքննութեան կնիքակցելով, զրկուեցան քղի,
կերակի ասօք իբր հանրագիրներ պատրաստողներ կամ
մեղսակիցներ ամբաստանուած են, որոց մասին տակաւին
տեղեկութիւն եկած է:

Վարդ մը պէյեր ամեն տեսակ չարագործութիւններ
կընեն, իրենց ընկերացուցած խուժանը, որոց մասին կը
գրեմ ուրիշ առթիւ:

ՎԱԿԱՐՇ.

ՍԵՐԳԵՅ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ՍՏԵՊԻԱԿ. (ԿՐԵՎՉԻՆՍԿԻ.)

«Դեկտեմբեր 23-ին, երկուշաբթի առաւօտը Սերգէյ Մի-
խայ ԼՕՎԻՉ Ստէպիակ, երկաթուղու գիծն անցնելիս, մի
սոսկալի ծախորդ պատահարով մահացու հարուած է ստանում
գլխին մի երկաթուղային գնացքից, մերկնայապետն անկարող
կիսելով ժամանակին կանգնացնել ընթացքը: Մահը լինում է
վայրկենական: Սերգէյ Ստէպիակ յայտնի Ռուս զորդ է: Ինքը
լինելով յեղափոխական, շատ տարիներից ի վեր ստիպված թո-
ղել է իր հայրենիքը, անցել Եւրոպա եւ տասը տարիից ի վեր
բնակութիւն էր հաստատել Լոնդոնում: Իր քաղմութիւն գրական
զբուսածքներով ու գրքերով լոյս ընծայած անգլիներէն լեզուով,
նա ձեռք էր բերել պատուաւոր դիրք եւ անգլիական հասարա-
կութեան մէջ իր ունեցած քաղմութիւն ընթերցողների համակը-
րանքն ու սէրն էր զբաւեւ: Նա ընդունված ու սիրված էր Լոն-
դոնի գրական ու լրագրական շրջաններում, եւ քաղմութիւն են
իր անգլիացի բարեկամները, որոնց մէջ շատերը՝ յայտնի գոր-
ծիչներ գրական ու քաղաքական եւ գիտնականներ: Եւ այլն...»

Այդպէս էին սկսում իրանց յօգուածներն անգ-
լիական լրագիրները Ստէպիակի վաղաժամ մահւան
երկրորդ օրը: Ստէպիակը զոհ գնաց եղբորական դժ-
բաղդ պատահարին ընդամենը 43 տարեկան հասակում,
միշտ տէր մի երկաթէ առողջութեան, որը նրան կը
պահէր կենդանի դեռ շատ տարիներ: Նա անհետա-
ցաւ իր տաղանդի ամենափայլուն հասունութեան ժա-
մանակը, երբ նրա անգլագրական խելքը դեռ շատ բան
էր խոստանում գրականութեան:

Ո՞վ էր Ստէպիակը, ինչ մարդ էր նա, ինչ
գործ արեց, ինչ հոգու ու սրտի տէր էր: Հայ հա-
սարկուծիւնը, որ այսօր նրա անունն առաջին անգամ

է լսում, կարող է հէնց մի խօսքից ճանաչել նրան
և անմիջապէս հասկանալ այդ ծանր կորստի նշանա-
կութիւնը նաեւ մեր, հայերիս, նկատմամբ: Ստէպի-
ակը հայերի անմենամահեղծ ու ջերմ բարեկամ էր,
հայկական դատի ամենաեռանդուն ու գործնական պաշտ-
պան էր և ամենահազադիւտ աջակից և ընկեր էր մեզ,
հայ յեղափոխականներս: Օտար ազգերի մէջ հայու-
թեան ունեցած, աւաղ, սակաւաթիւ անկեղծ բարե-
կամներից ամենահազադիւտն ու ամենադնհատելին նա
էր մեզ համար:

Որքան դառն է մէկ ամենամօտ բարեկամի հա-
մար գրել այս տողերը Ստէպիակի կորստի առթիւ:
Եւ սակայն մի ներքին մտերմական անհանգիստ զգա-
ցում մղում է ինձ մեր հայ ընթերցողների առաջը դը-
նել նրա ազնիւ ու վեհ կերպարանքն ու անունը, որ այ-
սօր, աւաղ, միայն մի դառն դամբանականով միջոց
ունեմ յիշատակելու հրապարակապէս:

Վարձես դեռ տեսնում եմ նրան իմ առջև, պար-
թե հասակով, լայն ուսերով, որոնք ասես լեռների
պէս հաստատուն էին, ահագին գլխով, բարձր, դուրս
ցցված կրոր ու խելօք ճակատով, աչքերի մեղմ ու քըն-
նող հայեացքով: Կարծես տեսնում եմ նրան ինչ-
պէս թմերի լայն ու ազատ շարժուածքներով իր բա-
րեկամ յայտնի անգլիացի հրապարակախօսների ու գը-
րողների շրջանում ջատագովում է հայկական դատը,
համոզում նրանց, որ զում նրանց կազմած սխալ գա-
ղափարները հայ յեղափոխական ու ազգային շարժման
մասին... Եւ առհասարակ սակաւախօս ու մտախոհ,
այդ պարագաներում նրա խօսքն առատ էր ու ճար-
տար և ընդհանուրի ուշադրութիւնը լարված էր նրա
վրայ, կախված էր նրա շրթներից: Եւ մի քանի օ-
րից յետոյ որ և է անգլիական բարեկամ թերթում
խմբագրական էր լոյս ընծայվում, որի մէջ մեզ հա-
մար դժուար էր նկատել Ստէպիակի յայտնած մտ-
քերի հետքերը, նոյնքան լայն, նոյնքան խոր, նոյնքան
ճշմարիտ և նոյն ուղղութեամբ, ինչպէս մի քանի օր
առաջ ճառում էր նա իր բարեկամների շրջանում: Նա
գործունեայ էր. նա եռանդուն էր: Նա բաց էր թողնում
որ և է առթիւ տեսնվելու այս կամ այն քաղաքական անձ-
նաւորութեան հետ հայկական խնդրի վրայ խօսակցելու
համար: Մեծ աշխատասէր՝ նա մոռանում էր իր գրական
ստիպողական աշխատութիւնները և մեր խնդրի որ և է
ծանր րոպէին շտապում էր բաղխել զանազան ազդե-
ցիկ անձերի գունդ: Նուիրելով մի վեմ ու իրաւացի
գործի, որ ազատութեան գործն էր, ազատութեան սր
ազգի որ լինի, բաւական է, որ մարդկութեան բարօ-
րութեան նպատակ կար, — նա նուիրվում էր ամբող-
ջովին, սրտանց, անկեղծօրէն, դրա մէջ տեսնելով իր
կեանքի նպատակը, իր արգարասէր ու հարուստ հո-
գու պահանջը, իր սօցիալիստական, իր ընդարձակ ու
մարդասիրական հայեացքների ու մտքերի յագեցումը:
Այդպէս, իր հայրենիքում նա կատարած լինելով, տա-
կաւին եթանասական թուականներին, ազդեցիկ, ա-
ռաջնակարգ դեր ուսական յեղափոխական շարժման
մէջ և լինելով մի նշանաւոր գործի անմասն հերոսը,
ուսանց բռնակալի աջ բազուկ զօրապետ Մեղէնցեվի
սպանողը, նա, Եւրոպայում, Հերցօգօվինիայում ու Ի-
տալիայում, զէնքը ձեռքին կուրելով, եռանդուն կերպով
մասնակցում է այդ տեղերի ազատական շարժումներին,
դրա պատճառով բաւական ժամանակ մնալով բան-
տարկված, և ապա իր կեանքի այս վերջին տարւալ

ընթացքում ամենաջերմ կերպով յարեցաւ հայկական դատին, շարունակ աշխատելով նրա համար անգլիական շրջաններում և պատրաստ անգամ շատ աւելի մեծ զոհողութեան: Նա այն սակաւաթիւ մեծ ու վեհանձն տիպերից ու սրտերից է, ինչպէս են Գարիբալդի, լաֆայետ, Կոստուսի, Դոմբրովսկի և մի քանի այլ հանրածանօթ եւրոպական յեղափոխականներ, որոնք միշտ պատրաստ են եղել ծառայելու, իրանց արեան գնով իսկ, Ազատութեան գործին, ուր որ էլ, ինչ ազգի մէջ էլ մղվէր այդ սուրբ գործը: Նա քաղաքացի էր համայն մարդկութեան պատկանող, նա գործիչ էր յոգեւտ բարձր իդէալների ընդհանուր մարդկութեան բարօրութեան համար:

Ինչպէս գրող՝ բացի ռուսերէնի, նա ունի ամբողջ հատորներ գրված ուղղակի անգլիերէն լեզուով և այդ հատորներից մի քանիսն արդէն թարգմանված ու լոյս են ընծայված եւրոպական մի քանի այլ լեզուներով: Իր գրութեանցներում, մի քանիսն վիպական և միւսները քաղաքական ու հրապարակագրական, եւրոպական հասարակութեան առջև հմուտ ու քանքարաւոր գրչով նա նկարագրում է ռուսաց յեղափոխական ու մշտաւոր շարժման զանազան շրջաններից քաղված ընդարձակ տեսարաններ ու պատկերներ, երևան է հանում ռուսաց քաղաքական ու հասարակական կացութեան յոռիութիւնը, առաջ է փռում իր ընդարձակ ու լայն գաղափարները, որոնց շնորհով ուսումնասիրում է ռուսաց կեանքի իրականութիւնը, ռուս ինտելիգենտի, ռուս յեղափոխականի և ռուս աշխատաւորի տիպը, միտքն ու սիրտը, որ հարստութեան մի հանք է, դեռ անյայտ եւրոպային: Իր գրութեանցներով նա միակն էր Անգլիայի համար և սակաւաթիւ անձերից մէկն էր եւրոպայի միւս երկրների համար, որ կարողացան կարեկցութիւն, համակրութիւն ու սէր ներշնչել եւրոպացիների մէջ դէպի ռուս ժողովուրդը, դէպի նրա ներկայ թշուառ վիճակն ատելի բռնակալութեան տակ, և ցոյց տալ թէ որպիսի մեծ ապագայ է խոստանում ռուս ազգը, եթէ նա մէկ օր առաջ ազատվէ իրան ճնշող քաղաքական սոսկալի շղթաներից:

Իբրեւ մարդ... Օժտված վերոյիշած բոլոր բարձր ու հազագիւտ յատկութիւններով՝ արդեօք այլ ևս պէտք կ'այ տեսնու, թէ իբրեւ մարդ ի՞նչ էր Մտէպնիակը: Մի սիրտ մանկական և մի միտք հասուն մարդու, մի սիրտ նոյնքան փափուկ, որքան և ուղղամիտ ու ազնիւ, մի խելք նոյնքան բարձր և ընդունակ գեղարուեստական տաղանդի երևակայութեան, որքան և մտածողի լըծութեան: Նա պարզ էր. նրան բոլորովին օտար էր ամեն կեղծիք. նա անյիշաչար ու անաչառ էր մինչև իսկ դէպի իր ամենակատարի թշնամին, որ միակ ռուսաց ջարհ էր ու կառավարութիւնը, որովհետև իրան ծանօթ և մէկ անգամ իսկ տեսնող ամեն անհատ միայն համակրութիւն ու սէր էր զգում դէպի նա: Նա գիտէր արեւցոյթեան չափ սիրել գաղափարը և յարգելով ամենքին, որոնք ազնիւ գաղափար կրողներ են, նա գիտէր նաև այդ գաղափար կրողներից ոմանց սիրել ու գնահատել նոյնքան ջերմ ու անձնուէր սիրով, ինչպէս սիրում էր գաղափարը: Նա այն մարդկանցից էր, որոնց հետ խօսելիս ամեն անգամ ու շարունակ զգում էիր խորին խելքի ու լուրջ կրթութեան ներկայութիւն, ինտելիգենտ մարդու ամենանուրբ ու հասուն մի տիպար: Հոգով՝ դեղարուեստ ու բանաստեղծ, որպէս և թարմ ու իդէալիստ

երիտասարդի պէս ոգևորվող ու կրակվող, միևնոյն ժամանակ նա մտածող էր (penseur), խօսք, գործ ու դրութիւն կշռող մի ծանրաբարոյ խորհրդատու՝ կեանքի ու մտքի փորձառութեան ամբողջ խոհականութեամբ:

Ահ, այո, նա մի հզօր ու ամբողջական բնաւորութիւն էր, նա մարդ էր, և մեր այս դառն ժամանակներում, ափսոս, խիստ հազագիւտ են այդպիսի մարդիկ: Եւ ես տեսայ այդ մարդու... դադաղը, ինքը զոհ գնացած մի կոյր ու ահաւելի պատահականութեան: Եւ այդ ըոպէին՝ նա... մեր առջին էր, բայց թաղված, այո, արդէն թաղված իր դադաղում, որ ամբողջովին ծածկված էր պսակների ու ծաղիկների բլրուով: Եւ այդ վերջին սգաւոր նուէրներն իր բարեկամներից ու հասարակութիւնից՝ այդ ըոպէին այն սենեակը, ուր նա այնքան անխնջ աշխատել ու տանջվել է իր հարազատ ժողովրդի բարօրութեան համար, իր հայրենական գրական գաշտը ծաղկեցնելու, դարձրել էին ծաղկանոցի մի ջերմոց, ուր վերջին անգամ, իր սրտի այլ ևս պաղած ջերմոցով, պառկած էր նա ինքն... արդէն դիակ: Լծնդոնի մոայլ ցերեկայ աղօտ լոյսը երկչոտութեամբ ներս էր սփռվում այդ ծաղկանոցում, ուր ծաղկէ պսակների սպիտակ գոյնը մրցում էր նրանց կարմիր գոյնի հետ՝ վերջին անգամ պսակելու այն մարդու գլուխը, որի կեանքի նշանաբանն էր, համանման այդ գոյների իմաստի, անարատ անկեղծութիւն ու ջերմ սէր: Եւ մի քանի ժամից յետոյ, դեռ չը հաւատալով թէ մեռած է նա, որն իր եղբերական մահից մի քանի ըոպէ առաջ իսկ առողջ ու հսկայ էր, — պէտք է կատարվէր, աւաղ, նրա վերջին սգաւոր ընթացքը դէպի վերջին կայան: Եւ մի քանի ժամից յետոյ նրա մտերիմ բարեկամները և անգլիական մտքի նշանաւոր ներկայացուցիչներ, նրա տաղանդը յարգողները և նրա անկեղծ բարեկամ աշխատաւորների ընկերութիւններ՝ հազարաւոր բազմութեամբ պէտք է ընկճված սրտով հետևէին մարդկութեան այն անձնուէր ու ազնիւ բարեկամի դադաղին, պէտք է ոգեշունչ ու սրտաշարժ խօսքերով ուղղէին նրան վերջին մնաց բարեւը և ապա այդ հսկայ մարմինը, հզօր խելքն ու մեծ սիրտը յանձնէին դիակիլման...:

Եւ մի քանի ժամից յետ հուրը հալեց նրան և հզօր մարտնչողից, որ ունէր մի մեծ ու նուրբ հոգի, մնաց միայն... մէկ ափ մոխիր...:

Եւ մէկ անմահ յիշատակ... Ա. Ն.

ՄԱՍՈՒԻՏԻ ՏԱԿՆ Է

Կ. ՊՕԼՍԻ ՄԵԾ ՅՈՅՅԸ

ԴԵՊԵՐԵՐ՝ ՊԱՏՄԱԿԻ ՄԱՍՆԱԿՈՂՆԵՐԻ ԵՒ ԱԿԱԴԵՄԵՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, ՀԻՒԱՆԴԱՆՈՅՈՒՄ ԵՂԱԿԱՎԱՐԱՐՆԵՐԻ ՏՎԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, ԸՄՊԱՆՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ՎԻՐԱՒՈՐՆԵՐԻ ԱՆՈՒՆԵՐՈՎ, ՅՈՅՅԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԶԱՆԱԶԱՆ ՎԿԱՅԱԶՆՈՒԹԵՐ, ԵՒ ԱՅԼՆ:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետևեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London, W. [Angleterre].